



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 29 ԱՊՐԻԼ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 143

### ՈՂԲ ԵՒ ԶՂՋՈՒՄ

**Տ**էր, լսէ իմ աղօթքս, դուն՝ որ հաւատարիմ ես՝ ականջ դիր աղաչանքներուս, դուն՝ որ արդար ես՝ պատասխան տուր ինձի: Ես քու ծառադ եմ, զիս դատաստանի մի՛ ենթարկել, որովհետեւ չկայ կենդանի արարած մը որ քու դիմացդ արդարանայ: Թշնամին զիս հալածեց, կեանքս հողին հաւասարցուց, եւ զիս խաւար աշխարհին բնակիչ դարձուց, արդէն մեռած մարդոց պէս: Զոգիս խռովքի մէջ է, սիրտս կը սոսկայ: Կը յիշեմ անցեալ ժամանակները, կը խորհիմ քու բոլոր գործերուդ մասին, կը խոկամ ըրածներուդ մասին: Զեռքերս քեզի կ'երկարեն օգնութեան համար. ծարաւ հողի պէս՝ հոգիս ծարաւ է քեզի: Շուտ ըրէ, Տէր, պատասխան տուր, հոգիս արդէն կը մարմնի, ինձմէ երես մի՛ դարձներ, մի՛ ձգեր որ ողջ-ողջ գերեզման իջնեմ: Ամէն առաւօտ ինձի սերդ լսել տուր, որովհետեւ ես քեզի վստահել եմ: Ահա քեզի կը դիմեմ, ցոյց տուր՝ ինչ ձեւով կ'ուզես որ ապրիմ: Տէր, ազատէ զիս թշնամիներէս, ես քեզ իմ ապաւէնս դարձուցի: Քու կամքդ կատարել սորվեցուր ինձի, որովհետեւ իմ Աստուածս ես դուն. քու բարի Զոգիդ զիս ուղիղ ճամբով թող առաջնորդէ: Տէր, քու անունդ փառաւորելու համար՝ ազատէ կեանքս. դուն՝ որ արդար ես, այս նեղութենէն դուրս բեր իմ անձս: Ինձի հանդէպ սերդ ցոյց տուր. թշնամիներս ոչնչացուր, բնաջնջէ բոլոր անոնք որոնք ինձի նեղութիւն կու տան, որովհետեւ քու ծառադ եմ ես:

### ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:*

*Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:*

*Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքայութիւն:*

*Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:*

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ՝ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ



## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

4:1-18

### ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՉ (4:1-4)

Մեղքին, յանցանքին ու անօրէնութեան դիմաց, Աստուծոյ կողմէ դարձի ու ապաշխարութեան կոչ ժողովուրդին: Կը նշանակէ, այնքան ապեն որ կայ առիթը, ժամանակը աւելի լաւ է վերադառնալ:

Այսպէս կ'ըսէ Տէրը. **«Եթէ ինձի դառնաս»** (1 հմբ): Մի՛ գուցէ Իսրայէլը դառնայ իր սխալ ընթացքէն, բայց հարցը պարզապէս դառնալ մը չէ, այլ հիմնականին մէջ Աստուծոյ դառնալ: Եւ այդ դարձը ըլլայ ճշմարտութեան եւ արդարութեամբ Տէրը ճանչնալ եւ ընդունիլ իբրեւ Կենդանի Աստուած: Որովհետեւ ինչպէս պիտի ըսէ Առաքեալը դեւերն ալ կը հաւատան Աստուծոյ ու կը սարսափին, բայց դարձ չունին: Ուրեմն, ոչ թէ պարզապէս դադրին անօրէնութիւն գործելէ, այլ՝ վերադառնան Աստուծոյ եւ գիծնք ընդունին իբրեւ Կենդանի ու ճշմարիտ Աստուածը, որ փարբեր է միւս բոլոր չաստուածներէն ու կուռքերէն:

Իսկապէս Աստուծոյ հայրական սէրն ու հոգածութիւնը այնքան մեծ է Իր ժողովուրդին նկատմամբ, որ հակառակ այդ ժողովուրդին անօրէնութեան, Աստուած փակաւին առիթ կու տայ, որպէսզի դառնան, եւ Ինք փրկէ գիրենք: Ահա Տէրը կոչ կ'ընէ ըսելով. **«Չմշակուած երկիրներ հերկեցէք ձեզի, ու փուշերու մէջ մի՛ ցանէք»** (3 հմբ): Հողագործի պարկերով, երկիրը, հողը պէտք է հերկել, փուշերէ մաքրել, որպէսզի առողջ սերմնահատիկը ցանուի պտուղ փալու համար, այլապէս, Քրիստոսի փրկած օրինակին համաձայն, Սերմնացանի առակը, հոն ուր որ փուշեր կային, այնքան սերմնահատիկը խեղդեցին: Սերմնահատիկը, այս պարագային Աստուծոյ խօսքը իբրեւ այդպիսին պէտք է որ պարարտ ու պարբաստ հողի մէջ իյնայ: Հերարքքականօրէն այսպէս երկիրը հերկելը ուրիշ բան չէ եթէ ոչ իրենց մարմինները, այսինքն՝ այն ինչ բան որ պղծած են, պէտք է որ մաքրուին այդ բոլորէն, եւ իրենք են հերկողը: Այլապէս գիտենք, որ հողը հերկողը եզր կամ մեքենան կ'ըլլայ, այս պարագային իրենք պէտք է որ հերկեն երկիրը, այսինքն՝ հեռու մնան ամէն փեսակի պղծութենէ: Իսկ փուշերը, ինչպէս առակին մէջ, եթէ արգելքներ են, այսպէս եւս արգելքները պէտք է վերացնեն, որպէսզի կարենան Աստուծոյ պարգամը լսել եւ գործադրել, պտուղ փալու իմաստով, այլապէս, փուշերը արգելք պիտի ըլլան պտուղ փալու:

Շարունակելով պարգամը Տէրը կ'ըսէ. **«Տիրոջը թլփապուեցէք եւ ձեր սրտի անթլապութիւնը վերցուցէք»** (4 հմբ): Մէկ այլ ուրիշ համեմատական մը կ'ըսէ Տէրը, այս անգամ օգտագործելով այն պարուերը, որ արդէն իւրաքանչիւր արու գաւակը 8 օրեայ կարարած էր այդ պարուիրանը թլփապութեան: Բայց այսպէս մարմնաւոր թլփապութեան մասին չէ, չնայած այդ մարմնաւոր թլփապութեան պարուերն ալ փրուեցաւ, որպէսզի անով յիշէին սրտի, մտքի ու հոգի թլփապութիւնը: Ինչպէս մարմնաւոր թլփապութեան պարագային մարմինէն բաժին մը կտրել եւ հեռացնել էր, նոյնպէս ալ հոգեւոր թլփապութեան պարագային հոգիէն դուրս վանել այն բաժինները, որոնք այսպէս կոչուած աւելորդաց են: Քրիստոս նոյնը պիտի ըսէր. **«որովհետեւ ամէն չար խորհուրդները սրտէն կ'ելլեն»** (Մատթ 15:19): այս բոլորը, որպէսզի չըլլայ թէ Աստուծոյ բարկութիւնը բորբոքի: Բայց այդ բորբոքումը ի գուր փեղ, կամ անփեղի բորբոքում մը չէ, այլ իրենց չարութեան ու չար գործերու պարճառով: Ազդարարութիւն մըն է, որ կրնայ խիստ ըլլալ ու խիստ է, բայց ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ սիրոյ արարաշայտութիւնը, գալիք այն մեծ կորստիւն ու հարուածէն, որ Աստուծոյ բարկութեան կրակն, որ ոչ ոք կրնայ մարել: Պօղոս Առաքեալի բացատրութեամբ, Աստուծոյ խրատը մի արհամարհէր, որովհետեւ եթէ կը խրատու ու կը յանդիմանէ, կը նշանակէ որ իբրեւ Հայր քեզ կը սիրէ (Եբր 12:6): Ուրեմն, դարձի գալու ազդարարութիւն եւ հրաւեր կոչ մըն է, որպէսզի աւարտին չկորստուին: Որովհետեւ վերջին դարաստիկին որ հասնին ազատող պիտի ըլլայ: Հիմա որ առիթը մեր ձեռքն է, պիտի ըսէ Պօղոս Առաքեալ բարիք գործենք, Աստուծոյ վերադառնանք:

### ՅՈՒՂԱՅ ԳՐԱԲՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ (4:5-12)

Ահա Տէրը կ'ազդարարէ թէ ինչ կը սպասուի, անոր համար ալ կ'ըսէ. **«պարմեցէք, քարոզեցէք, ըսէք, փող հնչեցուցէք, բարձրաձայն աղաղակեցէք»** (5 հմր): Աստուած Իր ձայնը, պարգասը լսելի դարձնելու համար փարբեր-փարբեր միջոցներ կ'օգտագործէ, եւ կոչ կ'ընէ որպէսզի **«պարսպապար քաղաքներ մտնեն»** (5 հմր), որովհետեւ **«չարիք ու մեծ կոտորած պիտի բերեմ հիւսիսէն»** (6 հմր): Արքայապալապալանը այնպէս մըն է որ կարծէք բերողը Աստուած Ինք է: Այս բոլորը Կ'ունենան, **«քու ճամբաներդ եւ գործերդ բերին քու վրադ. ասիկա քու չարութիւնդ է»** (18 հմր): Այդ գալիք հարուածը երկիրը աւերակ պիտի ընէ, քաղաքները պիտի աւերուին, բնակիչ պիտի չմնայ: Ուրեմն ինչ ընել. Տէրը կը պատուիրէ. **«Քուրձ հագնին, սուգ ընելով ողբան, որպէսզի Նիւուէացիներուն նման, Աստուծոյ բարկութիւնը իրենցմէ հեռանայ»** (8 հմր): Այնպիսի ահաւոր վիճակ կը սպասուի, որուն դիմաց թագաւորին սիրը պիտի հապնի: Քահանաները պիտի յիմարանան: Մարգարէները, այս պարագային՝ սուր մարգարէները, պիտի ապշին:

Այս բոլորի դիմաց, այնպէս կը ներկայացնեն վիճակը, որպէս թէ Աստուած խոսքացաւ ըսելով. **«Ձեզի խաղաղութիւն պիտի ըլլայ, մինչդեռ սուրը անոնց հոգին հասաւ»** (10 հմր): Բայց այդպէս չեղաւ: Այս խօսքերուն նմանօրինակ արքայապալապալան ունի նաեւ Քրիստոս, երբ կ'ըսէ. **«Ես չեկայ խաղաղութիւն բերելու, այլ՝ սուր»** (Մարթ 10:34): Իրենց արարքները այնքան խորացած էին, որ կը փորձէին զԱստուած մեղադրել, առանց անդադառնալու, թէ իրենց չարութիւնն է որ այսպիսի վիճակի մէջ են:

### ՅՈՒՂԱՅ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՎ ՇՐՋԱՊԱՏՈՒՄՑ (4:13-18)

13 համարը կը պարկերացնէ թշնամիին գալու եղանակը, թէ ինչպիսի ուժգնութեամբ եւ վայրագութեամբ պիտի գայ: Բայց ինչպէս կարելի է ազարիլ այս վիճակէն: Միայն ապաշխարութեամբ եւ վերադարձ առ Աստուած: Միակ ճանապարհը՝ ապաշխարութիւն: Անոր համար ալ 14 համարը կ'ըսէ. **«Ով Երուսաղէմ, սիրտդ չարութենէ լուս, որպէսզի փրկութիւն գտնես»**: 15 համարը կը ներկայացնէ աշխարհագրական դիրքը թէ ուրկէ պիտի գայ թշնամին **«Դանէն լուր եւ Եփրեմի լեռնէն թշուառութիւն լսել կու տայ»**, որոնք հիւսիսի շրջանը կը ներկայացնեն: Իսկ 18 համարը կու գայ ցոյց տալու թէ այս բոլորի պարճառը ուրիշ բան չէ եթէ ոչ իրենց ցանածը: Ժողովրդային բացաբարութեամբ. **«ինչ որ ցանես պիտի հնձես»**: **«Այս բաները քու ճամբաներդ ու գործերդ բերին քու վրադ. ասիկա քու չարութիւնդ է, որովհետեւ մինչեւ քու սիրտդ հասաւ»**: